

Հ. Ա. ԷԴՈՅԱՆ, Եղիշե Զարենցի պոետիկան, Երևանի համալ. հրատարակչություն, 1986, 451 էջ:

Հենրիկ էդոյանի «Եղիշե Զարենցը պոետիկան» մենագրությունը կառուցվածքային սյուժեի պոետիկայի տեսական հենքի վրա և գործնական համալիր կիրառման միջոցով որակական նորություն է բերում հայ գրականագիտության մեջ: Վերլուծության առավելագույն օբյեկտիվություն և գիտական լեզվի ինֆորմացիոն խտություն. ահա այն հատկանիշները, որոնք բխում են գրականագետի «սուբյեկտիվ տեսության» և իր իսկ դավանած գիտական սկզբունքների ներդրումներից:

Կառուցվածքային պոետիկան մեզանում գնահատվել է որոշ վերապահությամբ: Էդ. Ջրբաշյանը հենց առաջին գրքի է. «...ստույգորեն լեզվի ձգտում է առանձին-առանձին և կենսական բովանդակությունից անկախ ուսումնասր-

ելի գեղարվեստական երկի կառուցվածք, լեզվի, ստղաչափության ձևական հատկանիշները» (Գրականության տեսություն, Եր., 1980, էջ 189):

Զարգացման սկզբնական փուլում, իսկապես, ստրուկտուրալիզմը ընկել է ֆորմալիզմի «ձևի իմանենտության» և «պատմականի բացառման» գաղափարների ազդեցության տակ: Սակայն շուտով, շեղվելով տեսական ընթացակարգի գործման, այն հաստատել է գոյության իր իրավունքը: Փորձելով պատմականորեն մեկնաբանել կառուցվածքային պոետիկայի ուղացած առաջնությունը շարենցագիտության մեջ, էդոյանը գրում է. «Նախ և առաջ պետք էր յուրացնել այն մեծ ժառանգությունը, որ բողբի էր բանաստեղծը և նոր միայն փորձել ներափակեցել նրա

պոետական աշխարհը» (էջ 4): Համաձայնելով հեղինակին, ավելացնենք, որ գրականագիտական նյութի նախնական կուտակման փուլը ոչ միայն և ոչ այնքան պայմանավորված էր գալիք ստրուկտուրայիզմի հեռանկարով, որքան ավանդական գրականագիտության պահպանողականությամբ, որը, իհարկե, բխում էր հայ քրականության հատուկ ֆաղաֆայիական առաքելությունը նախ և առաջ գաղափարապես իմաստավորելու անհրաժեշտությունից: Կառուցվածքի ավանդական ըմբռնումը որոշ հայ հեղինակներին աշխատություններում հանգում էր սոսկ պատմական պոետիկայի խնդիրներին: Վերջինիս առավելությունը բնության լայն շրջանակն է (գաղափարաճգնբանական իրադրություն, սոցիալ-ֆաղափական վիճակ), բայց թերությունը՝ ստեղծագործության լեզվակազմի առողջ արտահայտչամիջոցները) դիտելով: Ըստ այդ ըմբռնման կառուցվածքը ոչ թե ձևաբովանդակային միասնությունն է (որը է ստրուկտուրայիզմի տեսական հիմքը), այլև ինքնաբավ ձև, որն ի տարբերություն ֆորմալիզմի, ստորադասվում է բովանդակությանը:

Գիտության զարգացման տրամաբանությունը պահանջում էր պոետիկայի առավել համապարփակ ըմբռնում: Որպես խնդրի լուծման դրական ազդարարում էր դրանք գրքի առաջարկում գրում է. «Դա (պատմության և տեխնիկ գործառնական առեղծությունները—Լ. Գ) հնարավորություն է ստեղծում գեղարվեստական տեխնիկա կառուցվածքը դիտելու ավելի լայն համակարգի մեջ, որը ելք է բազում դեպի պատմական-սոցիալական կոնտեքստներ և ավելի հստակ ու որոշակի դարձնում նրա «ինտելեկտուալ» միջավայրը» (էջ 4): Ըստ այսմ, վերլուծության համար հեղինակը բնորոշ է իմաստաբանական մակարդակը՝ վերջինիս՝ ոչ ավանդական կոնտեքստում (գաղափարական բովանդակություն), այլ կոնկրետ մշակութային կենտրոնում (սիմվոլ, միֆ, կառուցվածք):

Սիմվոլը գործառում և Չարենցի առավելապես վաղ շրջանի պոեզիայում: Սիմվոլիզմի «երկաշխարհային» սկզբունքը բացի իր «մասնագիտական» դրսևորումից (Չարենցի սիմվոլիզմը), ըստ էրոյանի, չարենցյան բառի կառուցման ընդհանուր սկզբունք է՝ նշան-նշանակվող հարաբերության անհատական ընկալումով: Սիմվոլները տեխնոլոգիայում նշանակում են բաներին («տուն»-«միստերիա») կամ տողերին («Բնակիչ էր ներմակ պսակը ձյունածոր»-«մահվան զգացողություն»): Բառի գեղագիտական գործառույթը այստեղ ընկալման մակարդակում արտահայտու էրկաստիճան է. նշանի ձևը նշանակվողի բովանդակության «ներկայացուցիչն է» «այսկողմնային աշխարհում» (տեխնոլոգիա՝ «կրակ»-«կյանք»): Իրականում նշանի դրսևորման լեզվական ինքնաշարժումը ֆառաստիճան է. նշանը և նշանակվողը ինքնաշարժվող ձևաբանական զուգակցություն են: Նշան-

նարանական (սեմիոտիկ) այս հարաբերությունը Չարենցի սիմվոլիստական ստեղծագործություններում, ինչպես ասվեց, ունի հատուկ ֆունկցիա, քանի որ վերը նշված աստիճաններից որևէ մեկին համապատասխանում է կոնկրետ ենթատեքստ:

Չարենցի ստեղծագործության ընկալման պրոցեսում նշանակվողի կապը միֆի կամ պատմության հետ չի գիտակցվում, բայց «նշանակվում է» ենթագիտակցորեն: Գիտակցության և ենթագիտակցության փոխհարաբերությունը արտացոլում է բառի սիմվոլիկ սկզբունքի մեջ. սիմվոլիստների «այսկողմնային» և «այնկողմնային» աշխարհները համընկնում են գիտակցության և ենթագիտակցության հետ: Ըստ էության Չ. էրոյանը ներմտորեն հայտնագործում է չարենցյան բառի «սիմվոլիկ հումանիզմ» պարագան: Իմաստաբանական դաշտում միֆը ներկայացվում է որևէ նշանով: Այն հրմանաբար-սիմվոլի տարբերակն է. օր. «տրոտմությունը» «մահվան» տարբերակն է: Չարենցի վաղ շրջանի պոեզիայի միֆական սիմվոլիկայի կենտրոնում «Կրակի» միֆն է: Այն կենտրոնածիք միջուկն է «Միրո», «Մահվան», «Հայրենիքի» միֆերի, ինչպես նաև խտացնում է իր մեջ Չարենցի գաղափարական, հուզարտահայտչական և հեղինակային հիմնական ոգին:

1920—25 թթ մեծ բանաստեղծի արվեստի ֆուտուրիստական «անբանաստեղծականության», խոսքի ապասիմվոլայնացման շրջանն է: Գրականագետը պարոդիայի և լեզվաճանադրության երևույթները (էմալե պրոֆիլը «ներ»-ից՝ «Ռեմանս անսեր») բխեցնում է սիմվոլիզմից և հակադրում նրան: Նշված երևույթները դիտվում են պոետի ստեղծագործական զարգացման շրջանի մեջ, որպես յուրատեսակ «միկրոնա-մակարգ», որն իրենով պայմանավորում է հաշորդին: Այսպիսով, ըստ էրոյանի, Չարենցի ողջ ժառանգությունը «մակրոնամակարգ է՝ ներքին ուժեղ միասնությամբ: Օրինակ, «պատմության մետաֆորիզացիայի» «միկրոնամակարգում» միֆը գործառում է որպես այլաբանություն, ծառայելով պատմության արդեն զուտ «պատմական» ընկալմանը: Այսպիսով աշխատության ողջ տարածվող գրականագետը աստիճանաբար «կառուցում է Չարենցի պոեզիայի «մակրոնամակարգ»:

Անշուշտ, նույնիսկ ծավալում հոգվածում հնարավոր չի լինի ներկայացնել գրքի անգամ ամենալակական հարցադրումները: Այնուամենայնիվ կա մի պրոբլեմ, որի տեսական կարևորությունը չափազանց զննանտի է այն շրջանցելու համար: Խոսքը բառերի իմաստային «վերականգնվող» մասին է: Երևույթները ըմբռնելով որպես տեխնիկ զարգացման ընթացք, Չ. էրոյանը ընդգծում է «արև» բառի լեզվա-մոտիվային ֆունկցիան և հանկարծազուտ իրավացիությամբ «դրսևակագրել» է «ողջակիզվել» բառի կոնտեքստային արժեքը: «Բառը,— գրում է նա,— օրը «վերականգնվողում»

առարկայական իմաստից անցնում է սիմվոլիկ-վերացականի և իմաստային վերանցման ուժի շնորհիվ իշխում է տեխնիկական, «ողջակիզվելն» է, որի իմաստը կանկրեմատում և միաժամանակ վերացական է դառնում «Արևի» մեջ» (էջ 52): Այստեղ հնարավոր է հետևյալ հարցադրումը, նմանօրինակ վերլուծությունը չի՞ հենվում արդյոք բառերի ասոցիատիվ կամ իմաստային աստիկ համադրության վրա, որը լեզվականորեն լինելով օբյեկտիվ, այնուամենայնիվ սուբյեկտիվ է ստեղծագործության գոյաբանության որոշման խնդրում:

Առաջ անցնելով ասեմ, որ կառուցվածքային պոետիկան սկզբունքորեն հետամուտ չէ ո՛չ հեղինակային հորինվածքի ազդակավորման, ո՛չ էլ նրա գործնականորեն անվերջ գեղագիտական ընկալումների պատմականորեն իրական վիճակի հայտնագործմանը: Տեխնիկական վիճակի որոնումները հագեթանակալան «կոսմոսում» կամ պատմական պատմաապոլորման ուղիներով, շնայած թեև նպատակին, անխուսափելիորեն բխվում են գեղարվեստական խոսքի բազմադիմությունը: Արդյունում մեկնաբանվում է ոչ թե տեխնիկ, այլ տեխնիկ ստեղծած հիպերտրոֆիկ վիճակներից որևէ մեկը: Հարկ է ասել, որ ժամանակին որոշ ստրուկտուրալիստներ ևս գերծ չեն մնացել այսպես կոչված ավելի վերացական կառուցվածքի «ոնալիզացիայի» գաղափարից, որը սերտորեն կապված է վերը նշված մտայնության հետ: Այսպիսով, էթե մի դեպքում ավանդական գրականագիտությունը տեխնիկ «հանում» է պատմականը և անխուսափելիորեն հանգեցնում հենց իրեն՝ պատմությանը, ապա շատ ստրուկտուրալիստներ ընկել են հակառակ ժայռանդության մեջ:

Նշված պարբերի լուծման խիստ ուշագրավ հայտ է Հ. Էդյանի դիրքորոշումը. «...կառուցվածքային պոետիկան լեզվաբանության անմիջական ազդեցությամբ հանախ մոռանում է «ոնոմոլոգիան» և ուշադրությունը կենտրոնացնում առաջին երկու անկյունների (սիմվոլիզմի և պոետիկայի) կապերին ու հարաբերություններին, որոնց պատճառով կորցնում է կանկրեթը, ոնալը, պատմականը և հանգում

վերացականին, այն կարիք ունի «օբյեկտը», հետևաբար, պետք է լրացվի կառուցվածքային տվյալներով՝ իբրև ամբողջ կոմպլեքսային վերլուծության երկու բաղկացուցիչ մասեր» (էջ 11):

Ինչ վերաբերում է Հ. Էդյանի գիտական լեզվին, ապա նրանում գեանատոլական բաներն ու զուգահրոսությունները ոչ թե մակդիրներ կամ պատկերավորման օժանդակ միջոցներ են, այլ գեղարվեստական երևույթներ էին շարժման անմայական բացատրություններ: Այստեղից էլ՝ հարցադրումների որոշակիությունըն ու տեսական սխառնակությունը:

Վերջում հարկ ենք համարում նշել, որ Հենրիկ Էդյանի «Սյրիշե Չարեհի պոետիկան» ուսումնասիրությունն իր արժեքով դուրս է գալիս սոսկ շարենագիտության շրջանակներից և կարող է տեսական սուբյեկտիվ լինել հայ գրականության պատմության և տեսության որակական զարգացման համար:

Աշխատությունը միաժամանակ հուշում է գրականագիտության մեջ լեզվաբանության, նշանագիտության և փիլիսոփայության նվաճումների կիրառման անհրաժեշտությունը:

Հեղինակի հայացքով՝ կառուցվածքային պոետիկան որպես գրականության վերլուծության կոմպլեքսային մեթոդ, հստակ տարբերակման է էսթետիկ գեղարվեստական խոսքի մշակութաբանական սկիզբները և այդ տեսանկյունից հենում նրանց ներքին կառուցողականությունը և արտաքին վերաբերությունը:

Գիրքը կարող է օգտակար լինել նաև անտիկ ու արևելյան փիլիսոփայություն ուսումնասիրողների համար. նկատի ունենք փիլիսոփայական կարգերի և միջերի գեղարվեստական կերպարայնության և արդյունում՝ փիլիսոփայական վերամասնավորման երևույթը Չարեհի պոետիկայում:

Հենրիկ Էդյանի աշխատությունը տրամագծորեն չի ժխտում այլ մտայնությունների հնարավորությունն ու արժեքը. այն պարզապես ավելի է մոտենում գեղարվեստական գրականության ընկալման և գեանատոլական ժամանակակից կերպին:

Լ. Վ. ԳԱՍՏՅԱՆ